ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության <<Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 28 հասցեում, ստորև ներկայացնում է ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2014/1ՃՀ ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում 22.05.2014թ-ին կնքված պայմանագրում 2014թ. հոկտեմբերի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառը	Ելնելով տեղանքից կատարվել են Մ-2 – Երևան – Երասխ – Գորիս - Մեղրի - Իրանի սահման կմ177–կմ217 առանձին հատվածների (կմ196+600 - կմ198+530 և կմ200+200 - կմ202+200) հիմնանորոգման աշխատանքների նախագծային լուծումների ճշգրտումներ, ինչի արդյունքում աշխատանքների Ծավալաթերթ - նախահաշվի <<IV. Երթևեկելի մաս>>, <<V.Իջատեղեր>>, <<VI.Արհեստական կառուցվածքներ>> և <<VII. Անվտանգության էլեմենտներ>> բաժիններում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Պայմանագրի 5.5 կետի համաձայն լաբորատոր փորձարկման արդյունքներով իրականացվել են նվազեցումներ:
Փոփոխության նկարագրություն	Փոփոխության արդյունքում նվազել է Պայմանագրի գինը և Պայմանագրի 5.1 կետում կատարվել է համապատասխան փոփոխություն: Պայմանագրի թիվ 1՝ «Ծավալաթերթ-նախահաշիվ», թիվ 2՝ «Օրացուցային գրաֆիկ» և թիվ 3՝ «Վճարման ժամանակացույց» Հավելվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
Փոփոխության հիմնավորում:	Պայմանագրի 5.5, 8.4 կետերը, լաբորատոր փորձարկման արդյունքները և հեղինակային հսկողություն իրականացնող <<Ճաննախագիծ>> ինստիտուտ ՍՊԸ-ի 03.09.2014թ. №45 և 30.09.2014թ. №53ա գրություններով ներկայացված մասնագիտական եզրակացությունները: Կատարված փոփոխությունները չեն գերազանցում պայմանագրային արժեքի 15%-ը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տիգրան Ջանոյանին:

Հեռախոս՝ 010 /580-523/

Էլ. փոստ՝ tjanoyan@transportpiu.am

Պատվիրատու՝ «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ